

# ...ՈՐ ԲՈԼՈՐԸ ՎԵՐԱԴԱՌՆԱՆ ԻՐԵՆՑ ՕՋԱԽՆԵՐԸ

*Հարցազրույց ԼՂՀ ռազմագերիների, պատանդների եւ անհայտ կորածների պետական հանձնաժողովի նախագահ, ԼՂՀ ՆԳ նախարարի առաջին տեղակալ, փոխգնդապետ Ալեքսանդր Աղասարյանի հետ*

**– Վերջերս Հայաստանի եւ ...բեջանի սահմանագլխին ...ացված ԼՂՀ, ՀՀ եւ Ադրբե...ական Հանրապետության ...կայացուցիչների հանդիպ...ն ժամանակ, իբրեւ բարի ...քի արտահայտություն, ...տերազմող կողմին հանձն... ...քելբաջարցի 36-ամյա մի ...բեջանուհի իր երկու զա...ների հետ: Ընդ որում, դա ...ին դեպքը չէ: Հետաքր... է նման բարյացակամ վե...երմունք երբեւէ դրսեւոր... է հակառակորդի կողմից:**

– Ոչ, նրանց կողմից այդպի... ...քայլ երբեք չի ձեռնարկվել: ...դեպքում, երբ մենք առանց ...է մեկի հետ փոխանակե... ...երադարձրել ենք 93 խա... ...բնակիչների: Նրանց մի ...ը վերադարձվել են Միջազ...ն Կարմիր խաչի, ԵԱՀԽ-ի ...կի խմբի նախկին նախա... Մարիո Ռաֆայելիի միջամ...թյամբ: Երկու հոգու (մեկ լեզ...ւ մեկ ավար) հանձնել ենք ...այցելած Դաղստանի Ազ...ն ժողովի նախագահ Հա... Մուխաչեւին: Անցյալ տարվա ...եմբերին 20 ադրբեջանցի ...պանդների էլ հանձնել ենք ...ական դեսպանությանը, ...ց փոխանակել են Ադրբեջա... ...գերության մեջ գտնվող ...ու եւ մահապատժի դատա...պված 5 ռուս ռազմագերի...ի հետ:

**– Ընդհանուր առմամբ, որ... ...պատանդներ ու ռազմա...ներ կան երկու կողմից, քանի՞սն են փոխանակվել ...եւ հիմա:**

– Մեր հանձնաժողովի գո...թյան ընթացքում 1993 թ. ...ուրից մինչեւ այժմ, մեզ հա...ղվել է փուն վերադարձնել ...< 241 քաղաքացիների, հիմ...կանում կանանց եւ երեխանե... Փոխանակել ենք նաեւ 44 ...կ: Մեր ցուցակներում դեռեւս ...ն մոտ 500 անհայտ կորած ...ց մարդկանց անուններ, որոնց ...ակատագրի մասին, ցավոք, ոչ ...տեղեկություն չունենք: Մեզ ...ք պահվում են 190 ռազմագե...րի, այդ թվում եւ վարձկաններ 1 թուրք, 3 ուկրաինացի, 9 ռուս, 1 աֆղանացի: Կային նաեւ թալիշներ ու թաթեր, որոնք արդեն փոխանակվել են: Որպես կանոն, փոխանակության համար յուրաքանչյուր հայի դիմաց հակառակ կողմը պահանջում է 10–15, իսկ մահապատժի ենթարկվածի դիմաց 30–40 ադրբեջանցի ռազմագերի (միայն ռազմագերի): Խաղաղ բնակիչների ճակատագրերը, կարելի է ասել, նրանց չի հետաքրքրում:

**– Ադրբեջանի զանգվածային լրատվության միջոցները վերջերս կրկին ի լուր աշխարհի հայտարարեցին, թե իբր նրանք, որպես բարի կամքի դրսեւորում, ազատ են արձակել գերության մեջ գտնվող շուրջ հարյուր հայազգի քաղաքացիների: Ինչքանո՞վ է իրականությանը համապատասխանում այդ հայտարարությունը:**

– Նման ինչ-որ բան եղել է, բայց ոչ այնպես, ինչպես հակառակ կողմն է հրամցնում: Հարեւան հանրապետության գործակալները, անշուշտ, իրենց կառավարության իմացությամբ, գուցեեւ հանձնարարությամբ, տարբեր ժամանակներում նախկին ԽՍՀՄ քաղաքներից (Ռոստով, Աստրախան, Եկատերինոդար, Յուժնի Սախալինսկ, Իրկուտսկ եւ այլն) տասնյակ հայազգի քաղաքացիների բռնել, բերել էին Բաքու իրենց ռազմագերիների հետ փոխանակելու կամ ուղղակի վաճառելու (այդպիսի բազմաթիվ օրինակներ են հայտնի) նպատակով: Ու երբ մենք "կտրականապես հրաժարվեցինք նրանց փոխանակել, միաժամանակ մեր բողոքն արտահայտեցինք միջազգային ատյաններին, Ադրբեջանը ստիպված տեղի տվեց եւ Կարմիր խաչի միջոցով ազատ արձակեց 65 գերեվարվածների, որոնք ենթարկվել էին դաժան խոշտանգ... Ադրբեջանի համապատասխան հանձնաժողովի նախագահ, ազգային անվտանգության նախարարի տեղակալ Նամիկ Աբասովը ուղղակի չի ընդունում մեր պետհանձնաժողովի առկայությունը, իսկ ինձ համարում է սոսկ Լեռնային Ղարաբաղի հայկական համայնքի ներկայացուցիչ, համառորեն խուսափելով ինձ հետ դեմհանդիման հանդիպելուց: Մեր միջեւ հաստատված է միայն հեռախոսային կապ: Զարմանալի չէ, որ գերիների փոխանակման վայրերում, արցախա-ադրբեջանական սահմանագլխին մեր հանձնաժողովի անդամներին երբեմն դիմավորում էին կրակահերթերով: Ռազմաճակատներում տիրող հրադադարը մեր աշխատանքին նպաստում է այնքանով միայն, որ հանդիպումների ժամանակ այլեւս չեն կրակում մեզ վրա:

**– Մոսկովյան բանակցությունների ժամանակ համաձայնություն է ձեռք բերվել մինչեւ 16 տարեկան երեխաների ու կանանց փոխանակությունն արագացնելու մասին: Ի՞նչ եք կարծում, Ադրբեջանը դարձյալ կդրժի՞ իր խոստումը:**

– Ճիշտն ասած, դժվարանում եմ պատասխանել, թեեւ, բոլոր դեպքերում, դա առաջընթաց քայլ պիտի համարել: Բանն այն է, որ հարեւան հանրապետության ներկայիս ղեկավարները, նպատակ ունենալով սեփական ժողովրդից թաքցնել իրենց սպանված զինվորների եւ վիրավորների ճշգրիտ քանակը, արհեստական խոչընդոտներ են ստեղծում այդ հարցում: Հուսանք, որ, ի վերջո, ադրբեջանական ժողովուրդը լսելի կդարձնի իր ձայնը, եւ բոլոր ռազմագերիներն ու պատանդները կվերադառնան իրենց օջախները:

ԿՈՄԻՏԱՍ ՏԵՐ-ԴԱՆԻԵԼՅԱՆ
Մեր սեփ. թղթակից
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ